

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Կ Յ Ա Ն Զ

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ԲՅՈՒԶԱՆԴԱԳԵՏՆԵՐԻ XX ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ԿՈՆԳՐԵՍԸ ՓԱՐԻԶՈՒՄ

(19-25-ը օգոստոսի 2001 թ.)

Համաշխարհային պատմության հորձանուտում իր ուրույն տեղն ունի Բյուզանդական կայսրությունը: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում բյուզանդագիտությունը դարձել է միջնադարագիտության կարևորագույն փորձաքարերից մեկը: Եվրոպական և մերձավորարևելյան տարածաշրջանների միջնադարյան պատմության հետազոտողները հաճախ են անդրադառնում Բյուզանդական կայսրության պատմության դրվագներին, այդ երկրի զարգացման օրինաչափությունների հիման վրա ուսումնասիրում մաս իրենց հետաքրքրող տարածաշրջանը: Վերջին հարյուրամյակի ընթացքում բյուզանդագիտությունն ամնախընթաց զարգացում է ունեցել: ԺԹ դարի վերջերին սկսեցին հրատարակվել բյուզանդագիտական առաջնեկ պարբերականները. «Byzantinische Zeitschrift», և «Византийский Временник», որոնք խթանեցին գիտաճյուղի զարգացումը ողջ աշխարհում: Այժմ տարբեր երկրների համալսարաններում հրատարակվում են բազմաթիվ պարբերականներ և հետազոտական շարքեր: Փարիզում լույս է տեսնում «Revue des Etudes Byzantines»,-ը և «Travaux et Mémoire»,-ն, Պրագայում՝ «Byzantionoslavica»,-ն, Լուվենում՝ «Byzantion»,-ը, Վիեննայում՝ «Jahrbuch der österreichische Byzantinistik», «Byzantina Vindobonensa», և «Tabula Byzantini Imperii», շարքերը և այլն:

Բյուզանդագիտական դպրոցների հաստատումը աշխարհի տարբեր համալսարաններում հնարավորություն է ընձեռել Նոր Հոռմի՝ Կոստանդնուպոլսի պատմության և մշակույթի բազմակողմանի ուսումնասիրության, ստեղծվել են բազմաթիվ օժանդակ գիտաճյուղեր, որոնք իրենց մպաստն են բերում գիտության զարգացմանը: Բյուզանդագետների հսկա բանակը, որը ստեղծագործում է աշխարհի գրեթե բոլոր երկրներում, հիմն տարին մեկ հավաքվում է՝ ի մի բերելու և արժույթն առնելու ճանապարհը:

Այս տարի բյուզանդագետների Ի միջազգային կոնգրեսը տեղի ունեցավ Փարիզում, օգոստոսի 19-25-ը: Սա իր ընդգրկմամբ ամենամեծ կոնգրեսն էր, որին մասնակցում էր ավելի քան 1200 զեկուոցող: Կոնգրեսի կազմակերպիչներն, Զ. Դագրոնի ղեկավարությամբ, հսկայական աշխատանք էր ծավալել մախորդ կոնգրեսից հետո ընկած ժամանակամիջոցում: Կոնգրեսի կազմակերպման հոգան իրենց վրա էին վերցրել Կոլեջ դը Ֆրանսը և Սորբոնի համալսարանը:

Բյուզանդագետների այս հավաքին իրենց աջակցությունն էին քերել Ֆրանսիայի ազգային ուսումնասիրությունների և դաստիարակության, Մշակույթի և Արտաքին գործոց նախարարությունները, Փարիզ Դ համալսարանը, Ecole pratique des Hautes Etudes-ի պատմության, փիլիսոփայության և կրոնական գիտությունների բաժանմունքները, Հասարակական հետազոտությունների բարձրագույն դպրոցի բյուզանդական, մոր-հունական և հարավ-արևելյան Եվրոպայի ուսումնասիրությունների կենտրոնը, Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնը: Կոնգրեսին ֆինանսական աջակցություն էին ցույց տվել Հունաստանի ազգային բանկը, Ա. Գ. Լևենտիսի և Զինգեր-Պուլիմյակի ֆոնդերը, Արևելյան միջերկրականի ծովային ընկերությունը (Eastern Mediterranean Maritime Limited):

Կոնգրեսի պատվավոր կոմիտեի մեջ ընդգրկվել էին նշանավոր գիտնականներ, համալսարանների ռեկտորներ, Լուվրի և Ազգային գրադարանի տնօրենները, Հունաստանի ու Կիպրոսի դեսպանները և գիտա-մշակութային մի շարք այլ գործիչներ: Գիտական կոմիտեն, որը գլխավորում էր Զ. Դազդոնը, ներկայացնում էր Ֆրանսիայի գրեթե բոլոր մահամզների համալսարանները, իսկ կազմկոմիտեի կազմում՝ Բրիդջիտ Մոնդրենի գլխավորությամբ ընդգրկված էին Միշել Բալարը, Ժան-Կլոդ Ծենեն, Վենսեն Դեռոշը, Ժաննիկ Դյուրանը, Դենիս Ֆելյալը, Բեռնար Ֆլյուզինը, Կրիստիան Ֆորշտելը, Միշել Կապլանը, Սեսիլ Մորիսոնը, Պաոլո Օդո-րիկոն, Ժան-Պիեռ Սոդիմին, Կոստանդին Ցուկերմանը:

Նիստերը տեղի ունեցան Կոլեջ դը Ֆրանսի և Սորբոնի լսարաններում, որոնք ապահովված էին ամենավերջին տեխնիկայով: Կոնգրեսի անդամները կարող էին օգտվել իրենց համար հատուկ կազմակերպված ինտերնետային և տեղեկատվական ծառայություններից: Մասնակիցների արձանագրումը սկսվեց օգոստոսի 19-ին: Նույն օրը Սորբոնի Ռեկտորատի մեծ սրահում մասնակիցների համար կազմակերպվեց ընդունելություն: Կոնգրեսի ընթացքում տեղի ունեցավ 8 լիագումար միստ, մասնակիցները զեկուցումներ կարդացին 25 կլոր սեղանների և 27 միստերի շրջանակներում՝ ազատ հրապարակումների տեսքով: Մասնակիցների արձանագրման օրը բոլորին հանձնվեցին Կոնգրեսի մյութերի ամփոփումների եռահատոր ժողովածուն և ծրագիրը:

Մասնակիցները ելույթ էին ունենում ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, իտալերեն, հունարեն և այլ լեզուներով: Բնակարկումները հաճախ տեղի էին ունենում հիշատակված երեք-չորս լեզուներով միաժամանակ, մասնակիցներին մոտեցնում էր ընտրված թեմայի հարազատությունը, գիտական եզրահանգումների ինքնատիպությունը, մորին մերձեցալու բուռն ցանկությունը: Կոնգրեսում հաղթահարված էին մարդկանց անջրպետող բոլոր պատնեշները: Կուլիսներում կարելի էր լսել աշխարհի գրեթե բոլոր լեզուներով խոսակցություններ:

Պլենարի միստերի թեմաները և դրանց պատասխանատուների թվարկումը կարող է ընդհանուր պատկերացում տալ կոնգրեսում քննարկված մյութերի շրջանակի մասին. 1. Ոգին և ձևը բյուզանդական մատենագրության մեջ (Ա. Գարցիա, Ռ. Մալխան), 2. Գյուղի զարգացումը Բյուզանդական կայսրության մեջ (Ա. Լայո),

3. Բյուզանդիան քրիստոնյա Արևմուտքի և մուսուլմանական աշխարհի միջև արվեստաբանական տեսանկյուն (Ժ.-Մ. Ծպիզեո), 4. Աթոս Սուրբ լեռ. Ավանդույթ և վերամոդոգում արվեստում (Ժ. Գալավարիս), 5. Բյուզանդական իրավունքի հետազոտությունների հաշվեկշիռ (Դ. Զիմն), 6. Byzantina-metabyzantina. ծայրամասերը ժամանակի և տարածության մեջ (Պ. Օդորիկո), 7. Արևմուտքիցները Բյուզանդական կայսրության գավառական քաղաքներում (Մ. Բալար, Ա. Դյուսելիե), 8. Ուսումնասիրության գործիքներ (Հ. Կոդեր և Պ. Շոայներ):

Հայ-բյուզանդական բանասիրության տեսանկյունից հատկապես հետաքրքիր էր Ա. Գարցիայի և Ռ. Մայխամոյի ղեկավարած «Ոգին և ձևը բյուզանդական մատենագրության մեջ» լիագումար միստը, ուր զեկուցողները փորձում էին դասակարգել և լուսաբանել բյուզանդական մատենագրության բառապաշարն ու յուրահատկությունները, ինքնատիպության ակունքները (Մ. Բիբիկով, Ի. Շևչենկո), աշխարհիկ տարրերը քրիստոնեական բանաստեղծության մեջ (Ֆ. Կոնկա), Ամսիկից բյուզանդական գրականությանն անցած ճարտասանության ու երկխոսության գրական ժանրերի, իրավաբանական ու ռազմավարական երկերի բառապաշարի զարգացման, Աստվածաշնչի մեկնությանն անդրադառնալու Ռոմանոս Մելոդոսի և Նիկեոսա Խոնիատեսի մոտեցումների յուրահատկությունները (Ա. Իերաչի Բիո, Ռ. Մայսանո, Զ. Մատիոն, Լ. Պեռնո, Մ. Սպադարո) և այլն:

«Գյուղի զարգացումը Բյուզանդական կայսրությունում (Ե-ԺԴ դդ.)» պլենար միստում ընթերցված զեկուցումները մվիրված էին Թ-ԺԴ դդ. միջնադարյան Եվրոպայում գյուղի հետազոտության այսօրվա բազմաբնույթ մեթոդներին (Բ. Կուրսենտե, Բ. Վիկհամ), Արևելյան և Հյուսիսային Մակեդոնիայում վերաբնակեցման, Հյուսիսային Աֆրիկայում վաղբյուզանդական գյուղի ուսումնասիրության խնդիրներին (Ա. Դուն, Ս. Ելիս): Այս հետազոտությունները հատկապես պետք է հետաքրքրեն հնագետներին և Հայաստանի ավատական կյանքը հետազոտողներին:

Հայագետ-արևելագետներին և հատկապես արվեստի պատմաբաններին, կարծում եմ, ավելի կհետաքրքրեն հաջորդ երկու պլենար միստերում (ա. Բյուզանդիան արևելյան քրիստոնեության և մուսուլմանական աշխարհի միջև արվեստաբանական քննություն, բ. Աթոս Ս. Լեռ. ավանդույթը և մորացումը արվեստում) հնչած զեկուցումների թեմաները: Ա. Կուտլերը, հետազոտելով բյուզանդական և արաբ պատմագիրների երկերը, ներկայացրեց երկկողմանի բանակցությունների ընթացքում կայսրերի և խալիֆների փոխանակած հազուսուների և մվերների մասին եղած հիշատակությունները: Վ. Ֆրանսուան քննարկում էր արևմտյան և արևելյան այն ճանապարհները, որոնցով օտար սպասքեղեն էր հայտնվում բյուզանդական կայսրերի սեղաններին: Մ. Գեորգոպոլոսը անդրադարձավ լատինական Մորեայում և Կիպրոսում գոթական ճարտարապետության թողած ազդեցությանը: Այս թեման շարունակեցին Ռ. Նելսոնը և Ժ.-Մ. Ծպիզեը, անդրադառնալով Արևմուտքի և բյուզանդական արվեստների ասիմետրիկ փոխհարաբերություններին և փոխազդեցություններին: Սուրբ լեռան խճանկարների, պատկերագրության, սրբապատկերների և զարդերի վերջին տարիների հետազոտության արդյունքներին էին մվի-

րել իրենց ուսումնասիրությունը Ե. և Կ. Լովերդու-Ցիգարիդաները: Հաղորդումներ լավեցին մաս Աթոսում մանրանկարված ձեռագրերի շրջապտույտի (Գ. Գալավա-րիս), Բյուզանդական շրջանում աթոնացիների վանքերի ճարտարապետական կազմության մասին (Պ. Թեոխարիդես): Աթոս լեռան մոնումենտալ արվեստում պատկերված ԺԴ դարի մոր սրբերի պատկերներին էր մվիրել իր զեկուցումը Բ. Տո-դիչը, իսկ Օ. Պապովան իր զեկուցումը ձոնել էր Ռուսական հավաքածուներում հանգրվանած, Աթոս լեռան վանքերում մանրանկարված ձեռագրերին:

Բյուզանդական իրավունքին մվիրված պլենար միստում զեկուցումներ լավեցին իրավաբանական բովանդակությամբ պապիրուսների ուսումնասիրության արդի մակարդակի (Ժ. Բյուկամպ), Բյուզանդական իրավունքի տեսական խնդիրների (Բ. Շտոլտե), Կայսրերի օրենսդրական ժողովածուների մոր դասակարգման (Լ. Բուրգ-ման, Ֆ. Գորիս), Օրենսգրքերից դուրս օրենքի, իրավունքի և մատենագրության փոխհարաբերությունների մասին (Ռ. Մակրիդես), բյուզանդական օրենսդրության իրողությունները ԺԴ դ. պատրիարքական վավերագրերում (Ե. Պապաջիանի):

Հաջորդ պլենար միստը մվիրված էր բյուզանդականին և բյուզանդամետին, որի ընթացքում զեկուցումներ ընթերցվեցին ժամանակի և տարածության մեջ կայս-րության ծայրամասերի ընկալման (Պ. Օդորիկո, Մ. Գալինա), Բյուզանդացու ինք-նության ձևավորման գործոնների (Վ. Պապուլիս), կայսրության նյութական կյան-քում գավառական մայրաքաղաքների նշանակության (Մ. Մունդել Մանգո), պատ-կերամարտության շրջանում Կապադովկիայում և Նաքսոսում կառուցված եկեղե-ցիների մշակութաբանական քննության (Լ. Բրուբակեր), բյուզանդացիների կողմից բարբարոս անվանված հարևանների, կենտրոնի ու ծայրամասերի մշակությանի փոխհարաբերության խնդիրների (Գ. Կավալո), Բյուզանդական օրենսդրական դաշտում հավասարակշռության մեխանիզմների (Դ. Ցուրկա-Պապաստաթի), Կայսրության ճակատագրում Սերբիայի խաղացած դերի (Լ. Մակսիմովիչ, Գ. Սու-բոտիչ) շուրջ:

«Արևմուտքիցները գավառական քաղաքներում» պլենար միստն իր ներա-ծական խոսքով բացեց Մ. Բալարը, ընդգծելով, որ ցայսօր հիմնականում ուսումնա-սիրվել է Կ. Պոլսի դերը Միջերկրածովյան առևտրում: Ներկաներին զեկուցումներ ընթերցվեցին Քիոսում, Փոկեայում և Կիպրոսում ճանաչական առևտրի (Լ. Բալետո), ԺԲ-ԺԳ դդ. բյուզանդական գավառական քաղաքներում և Կիպրոսում արևմտյան բնակչության առկայության (Կ. Սիգար, Դ. Յակոբի, Կ. Օտտեն-Ֆրո), ԺԵ դարի թեսալոնիկյան սկզբնաղբյուրներում վենետիկցիներին վերաբերող տե-ղեկությունների (Մ. Դոբբե), ԺԴ-ԺԵ դդ. Սև ծովի վենետիկյան քաղաքներում առ-կա օտար բնակչության (Ս. Կարպով), ԺԱ-ԺԲ դդ. ընթացքում Օխրիդայի և Իտալա-կան քաղաքների, Բալկանների ու Եվրոպական վաճառականների առևտրական կապերի (Բ. Պանով, Վ. Չենցովա), ԺԵ դ. վենետիկյան հաշվետումարներում իր հետքը թողած անգլիացի գրագրի ինքնության (Ա. Տալիցինա) պարզաբանման խնդիրներին:

Բյուզանդագիտական կոնգրեսի վերջին օրվա պլենար երեք միասերը ամբողջովին նվիրված էին բյուզանդագիտությանն օժանդակող գիտաճյուղերի զարգացման հետաձևարների: Բոլոր այս միասերում, հատկապես առաջինում ի մի էին բերվում բյուզանդական սկզբնաղբյուրների հետազոտության վերջին տարիների բոլոր ձեռքբերումները: Պ. Օռայների ծավալուն ներածությունից հետո զեկուցումներ ընթերցվեցին հնագրության և ձեռագրագիտության (Բ. Մոնրեն), վավերագիտության (Լ. Բուրգման), բառագիտության և լեզվի (Ե. Տրապ), Բյուզանդիայի առօրյա կյանքը և նյութական մշակույթը ներկայացնող սկզբնաղբյուրների (Տ. Կոլիաս), պատմական աշխարհագրության (Ժ. Կոդեր), երաժշտության (Ք. Համմիկ), դրամագիտության (Կ. Մորիսոն) և կնքագիտության (Ժ.-Կ. Օեմիե) նվաճումների վերաբերյալ: Ներկայացվեցին Byzantinische Zeitschrift-ի մատենագիտության համակարգչային տարբերակի յուրահատկությունները (Ռ. Հիս), ինչպես նաև բնագրի, նկարի և տեղեկությունների համակարգչային բանկի ստեղծման աշխատանքները վիեննական ծրագրավորողների կողմից (Ք. Գաստգեբեր):

Վերջին պլենար միասեր կարելի է անվանել բյուզանդագիտությունը արխիվներում: Հաղորդում ներկայացվեց Մյունխենի քաղաքային գրադարանում պահպանվող Կ. Կրումբախների թողոճների ուսումնասիրության (Ֆ. Թինեֆելդ), Ս. Պետերբուրգի արխիվներում պահպանվող ռուս բյուզանդագետների գործերի հրատարակության (Ի. Մեդվեդև), Սոֆիայի համալսարանի Իվան-Դուչև և կենտրոնի արխիվի հետազոտության անհրաժեշտության (Ա. Դզուրովա, Պ. Օռայներ) մասին: Զեկուցումներ ընթերցվեցին նաև բյուզանդական սկզբնաղբյուրների հրատարակության շարքերի (Վ. Հյորանդներ) և պրոսպոգրաֆիային (անձնանունների բառարան) նվիրված հետազոտությունների հրատարակման ծրագրերի մասին (Ռ.-Յ. Լիլի, Մ. Ջեֆրեյս):

Լիագումար միասերից հետո, հաջորդ աստիճանին կարելի է դասել կազմակերպված 25 կլոր սեղանները, որոնք թեզերի գրքում խմբավորված էին հինգ մեծ թեմաների (1. տնտեսություն և հասարակություն, 2. կրոն, 3. զինքը և հասարակությունը, 4. մատենագրությունը և մշակույթը, 5. կայսրության կենտրոնն ու ծայրամասերը) շուրջ:

Հայագիտության տեսանկյունից մասնավոր ուշադրության արժանի էին կնիքագիտությանը (Վ. Ջայբո, Վ. Օանդրովսկայա), փոքրասիական, հյուսիսատրիքյան և մասնավորապես կիլիկյան բնակավայրերին նվիրված հետազոտությունները (Կ. Բելկե, Ժ.-Պ. Սոդիհի): ԺԱ դարի Վասպուրականի բնակչության զաղթին անդրադարձավ Ժ.Դեդեյանը: Թ կլոր սեղանը, որը վարում էր Նիմա Գարստյանը, անվանված էր «Ոչ հույն արևելյան քրիստոնյաներն իսլամից առաջ», ուր Հայաստանին և նրա մշակույթին նվիրված զեկուցումներով հանդես եկան Օ. Ռեմուն, Զ. Ռասսելը, Ռ. Թոմսոնը և Վ. Արուտյունովա-Ֆիդանյանը:

Առանձնացված էին նաև բյուզանդական եկեղեցական մատենագրության տարբեր ժանրերին վերաբերող զեկուցումները, ուր ցույց էր տրվում Կ. Պոլսի Աստվածաբանական դպրոցի զարգացման միտումները, նրա փոխհարաբերությունները

կաթոլիկ աստվածաբանության հետ: Զեկուցումների մի խումբ անդրադառնում էր Բյուզանդական կայսրության վանական կյանքին, այդ հաստատությունների մշակութային և տնտեսական գործունեությանը: Կազմակերպիչների ուշադրությունից չէր վրիպել մահ սրբարանների, սրբապատկերների և մասունքների հետազոտության խնդիրները (Հայաստանում խաչի պաշտամունքի հարցերին էր նվիրելու իր զեկուցումը Ժ.-Պ. Մահեն, որը, ցավոք, տեղի չունեցավ):

Առանձին միստ հրավիրվեց պապիրուսի, մագաղաթի և թղթի օգտագործման խնդիրների շուրջ: Բյուզանդական կայսերական փաստաթղթի վավերագիտության հարցերին նվիրեցին իրենց զեկուցումները Բ. Գաստգերերը և Պ. Օռայները: Առանձին միստ նվիրվեց մահ պահպանված խնդրագրերի հետազոտությանը: Բյուզանդական ձեռագիր մատյանի և հասարակության փոխհարաբերությունների հարցին անդրադարձան հնագրության մասնագետները:

Առանձին միստեր նվիրվեցին բյուզանդական մատենագրության այնպիսի գրական ժանրերի, ինչպիսին է էպիստոլոգրաֆիան (թղթագիտությունը), էպիգրամը, վարքագրությունը, ճարտասանությունը, փիլիսոփայությունը, մեկնողական գրականությունը, աստղագիտությունը, բժշկությունը, հիմնոգրաֆիան (շարականագիտությունը): Հետազոտության իրենց աշխատանքին և սկզբունքներին ծանոթացրեցին Ծեսի և արարողակարգի մասնագետները: Կ. Պոլսի հայկական և բյուզանդական եկեղեցական երաժշտության հարցերի քննարկման էր նվիրել իր զեկուցումը Ա. Վարդումյանը:

Առանձնապես աշխույժ մթնոլորտում էին անցնում Բյուզանդական կայսրության ծայրամասերին (Աֆրիկա, Իտալիա, Փոքր Ասիա) նվիրված միստերը, ուր քննարկվում էին այդ տարածաշրջանների պատմության և մշակույթի խնդիրները: Հիշատակելի է մահ «Բյուզանդիան և մրա պատմությունը 2000-ական թվականներին» հատուկ միստը, որի նպատակն էր անդրադառնալ տարբեր բնագավառներում և երկրներում բյուզանդագիտության նվաճումներին: Կոնգրեսում զեկուցում լավեց մահ «Հայ-բյուզանդական ուսումնասիրությունները 2000-ական թթ.» թեմայով (Ա. Բոգոյան):

Գրեթե մույն հարցերի շուրջ էին ձևավորվել մահ «ազատ զեկուցումներ» անվանված միստերը: Դրանք, ըստ կազմակերպիչների մտահղացման, բաժանվել էին երեք հիմնական թեմաների. 1) գրավոր սկզբնաղբյուրներ (ձեռագրեր և մանրանկարված մատյաններ, գրականություն, պատմիչներ և ժամանակագիրներ, իրավունք, փիլիսոփայական գիտություններ, աստվածաբանություն, ծես և վարքագրություն), 2) քաղաքակրթություն (Եկեղեցու և կրոնական կյանքի պատմություն, վանականություն, երաժշտություն և հասարակություն, հաստատություններ (պետական և եկեղեցական ինստիտուտներ), տնտեսություն և հասարակություն, գյուղ և բնակչություն, դրամագիտություն և կնքագիտություն, ազգային պատմություններ, Բյուզանդիան և հարևանները), 3) հնագիտություն և արվեստի պատմություն (պեղումներ, ճարտարապետություն, մախարբյուզանդական զարդարանք և միջին բյուզանդական քանդակ, ուշ բյուզանդական աշխարհիկ արվեստ, հետբյուզանդական

Հումաստան, Բյուզանդիան և ծայրամասերը, բյուզանդական և հետբյուզանդական պատկերագրություն և այլն):

«Մանրանկարված մատյաններ» բաժնում լաված գեկուցումներից հայագետներին կհետաքրքրեն Ի. Ռապտիի (Փարիզ) ելույթը, որը նվիրված էր Հեթում Բ-ի նկարազարդ ճաշոցին (ՄՄ-979) և Բ. Մարանչիի (ԱՄՆ) գեկուցումը՝ ձոնված Կեղծ Կալիսթենեսի վեպի հայկական պատկերագրությամբ (Ս. Ղազար-424): Ուշադրության արժանացավ Է. Վարդանյանի գեկուցումը՝ նվիրված 1558 թ. Միմաս Մաղկոդի կողմից Վասպուրականում նկարազարդած Սաղմոսագրքին (ՄՄ-10441) և Ե. Բալիկա-Վիտակովսկայայի (Օվեդիա) ելույթը, ուր հեղինակն անդրադարձավ Ոսպալայի համալսարանում պահվող՝ Կ. Պոլսում գրված, ԺԷ դարի պատկերազարդ հայերեն մի ձեռագրի նկարագրությանը: «Հայաստանում և Աղվանքում ազգային գիտակցության ձևավորման շուրջ» գեկուցումով կոնգրեսին ներկայացավ Կ. Յուզբաշյանը: Մատենագրության բաժնում հնչեցին Գ. Մուրադյանի (Պիտոյից գրքի հումարեն սկզբնաղբյուրների մասին), Է. Օրիհյանի (Հայկական և Բյուզանդական մատենագրությունների ուսումնասիրության մեթոդների և գրական ժանրերի համեմատության վերաբերյալ) և Լ. Ստեփանյանի (Հայ մատենագրության մեջ հիշատակված կարծեցյալ հույն հեղինակները) գեկուցումները: Հայագիտության տեսանկյունից հետաքրքիր էին նաև եկեղեցական պատմագրությամբ նվիրված Ի. Վաչևայի (Եվսեբիոս Կեսարացին և վաղ միջնադարյան պատմագրության ձևավորումը), Ի. Խիրուշինի (Դ-Ջ դարերի եկեղեցական պատմագրության զարգացման երեք փուլերի մասին), Ա. Թոփչյանի (Մովսես Խորենացու հղումների համակարգի մասին) և Ա. Բարմիի (Հովհաննես Կլավդիոպոլսի «Ընդդեմ բաղարջակերաց» երկի մասին) գեկուցումները:

Բյուզանդական քաղաքակրթությամբ նվիրված ազատ գեկուցումների մեջ հիշատակելի է Մ. Վան Էսքրուկի (Պետական-եկեղեցական հեթազայությունը Հուստինիանոս Ա-ից մինչև Լևոն Գ.) և Պ. Նորդհագենի (պատկերամարտության խնդիրների շուրջ) գեկուցումները: Բյուզանդական արվեստում Ջրադաշտական խորհրդրանշանների հետազոտության խնդիրներին էր նվիրել իր ելույթը Ռ. Ամիրբեկյանը: Արծարծվեցին նաև բոգոմիլների աղանդավորական շարժման ուսումնասիրությամբ վերաբերող խնդիրներ, ծրագրված էր նաև Թոմարակյան շարժմանը (Ջ. Պողոսյան) նվիրված գեկուցում, որը ցավոք տեղի չունեցավ: Չլավեցին նաև Մ. Լորդկիսյանի վրաց Բագրատունիների աստվածային ծագման մասին և Գ. Վարդույանի Հայ-բյուզանդական ծիսական գուգահեռներին վերաբերող ելույթները:

Ջեկուցումներ լավեցին եկեղեցական ժողովների (Լիոն, Ֆլորենցիա), վանականության իրավական վիճակի, կյանքի պայմանների, սոցիալական ու ազգային պատկանելության և Եկեղեցու պատմության, եկեղեցական երաժշտության և հասարակական կյանքի փոխհարաբերության, Բյուզանդական կայսրության մեջ ներքինիների ինստիտուտի զարգացման, Եկեղեցու և պետության մեջ նրանց խաղացած դերի մասին, գավառական ազնվականության և զինվորականության, ֆեոդալական գործի և գյուղատնտեսության վերաբերյալ: Մասնավոր միտեր նվիր-

վեցին մահ դրամագիտությանն ու կնքագիտությանը, առանձին ազգային ընդհանրությունների և ժողովուրդների պատմությանը (եթովպացիներ, ասորիներ, հայեր, վրացիներ, ռումիններ, հունգարներ, սլավոններ, սելջուկ-թյուրքեր, թուրքեր):

Ազատ զեկուցումների հաջորդ բաժինը մվիրված էր հնագիտությանն ու արվեստի պատմությանը: Այստեղ զեկուցումներ ընթերցվեցին Բյուզանդիայի և Արևմտահայկան տարածաշրջանների կերամիկայի, երկաթագործության, ոսկեգործության, զգեստների, ապակեգործության, պատկերագրության, շինարարական արվեստի և ճարտարապետության վերաբերյալ: Մեզ համար առանձնապես հետաքրքիր էր հնագիտության մասնաճյուղի միստերից մեկը (օգոստ. 23), որը գրեթե ամբողջությամբ վերաբերում էր Կիլիկիայի վաղ բյուզանդական պաշտպանական և եկեղեցական կառույցներին, ուր զեկուցումներով հանդես եկան հնագետներ Ի. Ֆուլյանը, Ֆ. դը Մաֆեին, Մ. Դելլա Վալեն, Ա. Պարիբենին, Ա. Յակոբինին, Է. Լաֆլին:

Կոնգրեսին ներկա Հայաստանի գիտնականներն իրենց շնորհակալությունն են հայտնում Հայաստանում Ֆրանսիական դեսպանության մշակութային կցորդ պարոն Ժ. Մարտենին, Մոնպելիեի համալսարանի պրոֆ. Ժ. Դեդեյանին, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Կ. Մուրաֆյանին և Ամանուն մեկենասին՝ Փարիզի Ի միջազգային կոնգրեսի հայ պատվիրակներին ցույց տված բարոյական և մշակութային աջակցության համար:

Կոնգրեսն իր մասշտաբներով ամենաշատ տպավորություն թողեց մասնակիցներին վրա և մեկ անգամ ևս ապացուցեց, որ Միջնադարյան Հայաստանի պատմության և մշակույթի ուսումնասիրության շատ խնդիրներ իրենց լուծումը կարող են գտնել Հայաստանում բյուզանդագիտական ուսումնասիրությունների զարգացման ճանապարհով: Եվս մեկ անգամ ապացուցվեց. Հայաստանում պիտի ձևավորվի բյուզանդագիտական դպրոց իր տարեգրքով, որը, իմ կարծիքով, կարող է լինել արդեն տասը տարի ֆինանսական դժվարությունների պատճառով դադարեցված ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի «Կովկաս և Բյուզանդիա» պարբերականը: